



ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 111

6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՑԵՆԵԿԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՆԵՐ ԴԱՏՐԱՐԱՐԱՆԻ

համար, կը բաւէ ցարդ Մեհմուտայի մասին ոտէպ անգամ մօր զրաճնիւրը համառօտիւ ամփոփել: Այս թերթը հակառակաւէրներուն, անհապաղանդներուն, բանադրեալներուն դոր ծիք և օսկան դարձաւ՝ կկրքով և յետին մտածումով և ա՛յնչափ ծայրայեղութեան զնաց՝ որ թաւալլօր քնկաւ խորխորատի մէջ, անչափիւի անկումով: Քննադատութենէ անցաւ դատաստանի: Վճիռներ արձակեց՝ հոգեւոր իշխանութեան դէմ, նոյն իսկ Ս. Քահանայապետին դէմ. պախարակեց ու դատափեսեց Վնիկա. ընդհակառակն քաջալիւրեց ու զրգեց չարագործները, պաշտպանեց անոնց արարքը, սրբապղծութիւնները, անիմանալի կեղծիքով մը միշտ ամբաստիւ ընելով — նոյն իսկ վերջերս, — բանադրեալ ժողովը, որուն անգամն է իր տնօրէնը. մինչդեռ ա՛յն ժողովոյն անդամներն են որ իրականապէս կազմակերպեցին ու յոյս աշխարհի առ

ջեւ վարեցին ամէն տեսակ սեղանակապտու-
թիւնները. անոնք են որ բացայայտօրէն հեռ-
տեցին և ցարդ անհնազանդ գտնուեցան Ս.
Քահանայապետին: Բայց քարը անգամ մը որ
սկսի գլորելու, ա՛լ չի կենար. մարդուս կամքն
ալ այնպէս է, չի կրնար ընկրկիլ, եթէ ոչ մեծ
բռնութիւն և զոհողութիւն մը ընելով. և
Մեհմուա չըրաւ այդ վեհ զոհողութիւնը,
չկատարեց այդ սրբազան պարտքը: Ուստի
Մեհմուա այս ստորին խաւերէն մխրճեցաւ
ստորնագոյններու՝ բարոյապէս. սկսաւ տե-
ղացնել սխալ ու յերկրուած լուրեր, խոր-
հրդածութիւններ, հասաւ մինչեւ բացարձակ
սուտեր հնարելու և հրատարակելու՝ ան-
պատկառօրէն, կարծես հնար ըլլար սուտով
յաղթանակել ճշմարտութեան դէմ: Սուտին
բնական ծնունդն է զրպարտութիւնը. անոր
ալ անխղճօրէն անձնատուր եղաւ, նախա-
տինքներ արձակեց, տեղատարափ, ո՛չ մէկ
ազգի մէջ նմանը չտեսնուած նախատինքներ
ու զրպարտութիւններ, ցած և անարժան և
պժգալի ոճերով, հոգեւոր Պետին դէմ, ամ-
բողջ կղերականաց դէմ. զրպարտեց ու զըր-
պարտեց. և դեռ անգաղար կը ստէ ու կը
զրպարտէ ու կը նախատէ: Քահանայապե-
տական շանթի հարուածէն վերջը՝ փոխա-
նակ երկինք նայելու՝ ուսկից կ'իյնար ան,
թշուառաբար երկրիս վրայ փնտռեց գործա-
կիցներ՝ Մեծ Վճռատուն. գործակիցներ՝ շո-
ղոքորդ, պնակալէզ, սուտակապառ. այս
մակդիրներով ցանդ որակեց կղերականները.
վատ մխիթարութիւն, անապաշտ սրտի
նշանակ. Մեհմուայի համար ահագին ան-
կում՝ բարոյապէս: Բայց չկրցաւ հոն ալ կա-
սիլ. քարը կը գլորէր... շարժումը աւելի
արագեցաւ. Կիրքէն, սխալէն, սուտէն, զըր-
պարտութենէն Մեհմուա անցաւ՝ արձակե-
րասանակ, ամենամոլար. հերետիկոսական
յօդուածներ հրատարակելու, իր անիրաւ դա-
տին պաշտպան ըլլալու երեւոյթովը կամ
խեղճ ու անխիղճ մխիթարութեամբը. մէն
մի թուոյն մէջ այլեւայլ հերետիկոսութիւն-
ներու շարք մը հրատարակեց: Անոնք ալ ի
վեր հանուեցան, սարսափով. հերետիկոսու-
թիւնն էր որ պիտի ջառագովէր կաթողիկէ

դատ մը. ինչպէս իրենց անիրաւ ու մոլորա-
կան դատը կ'անուանէին... բայց Մեհմուա
փոխանակ սոսկալու, աւելի յանդգնեցաւ.
քարը կը գլորէր միշտ, կը գլորէր յանդուգս.
կամքը տկարացած, խորտակուած էր. զո-
րեցաւ ինկաւ մինչեւ անկրօնութիւն: Հո-
գեւոր իշխանութեան դէմ իր ժպիրհ մաքա-
ռումին օգնական կարծեց գտնել Գ. Մալխա-
սի անորակելի, անսանձ ու ժպիրհ գրչին
մէջ. նա սրբութեանց և հոգեւոր իշխանու-
թեան դէմ աւելի հզօրեղապէս, աւելի կա-
տազօրէն կը հայհոյէր, ըստ իր սովորութեան.
աս բաւական էր Մեհմուայի համար: Բայց
կիրքի և անհնազանդութեան մատախուղով
կուրացած Մեհմուայի աչքերը չկրցան որոշել
այդ՝ — այլուստ անյարիբ, անհամ, պոռո-
տախօս, ծանծաղամիտ և անկերպարան (թո-
հու վէ պոհու) — յօդուածներուն գրեթէ
մէն մի տողին մէջ ցանցնուած անհաւատու-
թեան որոմները. ապեց զանոնք, հրատա-
րակեց զանոնք, իր կարծած թշնամոյն՝ հո-
գեւոր իշխանութեան դէմ, լախտի հարուած-
ներ տալու փցուն մխիթարութեամբ. քարը
ահաւոր բոմբիւնով ինկած դարկած էր ան-
դունդին յատակը. Մեհմուա անկրօն եղաւ:
Դողն եւ գողակիցն ի նմին պաթի եւ: Եւ
չի զօրեր՝ այն ամէն անպատկառ յօդուածները
իւրացնելէ, հրատարակելէ, անոնցմով հան-
րութիւնը դայթակղեցնելէ վերջը՝ չի զօրեր՝
յիտասանայեաց ակնարկով մը կամ ուրիշներէ
սթափուելով, ըսել թէ՝ «Մեր տուած այդ
յօդուածներու այս ինչ կամ այն ինչ կէտիւր
կը վերապահենք, չենք ընդունիր»: Ո՞ր մէկը
... ըսել է թէ մնացածները կ'ընդունի. արդ
մնացածը ամբողջ միեւնոյն խմորէն է, ած-
պարարի ճարպիկութեամբ քիչ թէ շատ
սքողուած, թունալից ապերաւանութեամբ
թաթախուած, այն մարդէն՝ որ ինքզինքը
անկրօն խոստովանելով հանդերձ, — որչա՛փ
ալ Մեհմուայի մթնոլորտն՝ յորում տատա-
նելու համակամած է, ըլլայ ամենասահմա-
նափակ, — կը յանդգնի առանց ամչնալու
սա ոճը դորձածիւ. Մեհմ՝ գրագեցներս !!!
Խեղճ մարդ. մոլորեալ միտք, աւելի մոլոր-
եալ թերթ:

Ահա, ո՞վ անկեղծ գտեալացիդ իմ, ահա քեզի Մեհմուտ, հիմա ինչպէս որ է։ Հին ժամանակները բարի, կաթողիկէ Եկեղեցւոյ հնազանդ եղած և ամէնէն գովուած կրնայ ըլլալ։ Իսկայ այժմ տախիւնչ օգուտ կ'ունենայ։ Ճատ մը կ'իջի, սկիս թուեալոր պտուղներ արտադրել, աղբիւր մը՝ աղակաւնուած ջուր մտաւարարել, ինչ լանի կը ծառայէ տաջ քաղցր պտուղ կամ ջուր տուած ըլլալը։ մանաւանդ թէ առուելադոյն դատապարտութիւն իսկ։ Աւետարանին ոգին յայսմիեք մի՛ մեղանչեմք է։ Նոյն իսկ պարտքը կատարողը ծառայ անպիտան է։ և ըսաւ իրաւունք չունի պարծենալու։ ո՛ւր մնաց հետոն ու կամապաշտը։ Աւետարանի ոգին է՝ անցածը մոռնալ, բարի թէ չար, և աշխատիլ բարիք ընելու, զառ ի յետոյն մոռացեալ՝ յառաջագիտն Եկեղեցւոյ անցածով պարծենալը՝ փոքր ուսոյց փարիսէական յատուկ է։ որ դատապարտուեցաւ (Ղուկ. ԺԲ.)։ Լուտեր ալ շատ լաւ սկսած էր։ Լամբնէ, Օրմանեան և ընկերութիւն շատ գովելի եղանդ ունեցած էին։ բայց ապա՝... լաւ ևս է՝ գործադատար գէշ անցեալ իսկ ունեցած ըլլալով, ապա արդարանալ ու պարտաճանաչ ըլլալ, քան թէ բարի ըլլալէն վերջը վատթարանալ ու չըզգաստանալ ու չարին մէջ յարատեւել։ Վկայ՝ Մագդաղենացիներ, Պետրոսներ, Օգոստինոսներ, Նիւմաններ, Մանցօնիներ, Պրիւնթիէներ և այլք անթիւ անհամար։ Ով որ պատկերազանց կ'ըլլայ ու ա՛յնպէս կ'ը ՍՈՐՎԵՑՆԷ մարդիկներու, փոքր պիտի կոչուի երկնից արքայութեան մեջ (Մատթ. Ե.)։ Ծոյլերն ու անարժանները միայն կը պարծին անցեալով։ Դո՛րժը պէտք է ինքնին վրկայէ։ և բարեոյն մէջ յարատեւութիւնն է որ կ'աւելու պատկը։

Իսկ իբր արդարացուցում յառաջ բերուած պատճառանքը բոլորովին անհիմն ու անարժէք է։ Ազգային իրաւունքներ կը պաշտպանեն եղբեր... Ա՛լ ձանձրանալու աստիճան յեղիղեղեցաւ։ բացարձակ բարութեանք, խաղկանք։ Ապօրինի ժողովներ։ բնականաբար չեն ընդունուիր, եկեղեցական իշխանութիւնը սարկացնող, աշխարհականացնող, տի-

րապետող, բռնակալ։ — Եկեղեցական ստացում՝ անկապտելի և անբռնարարելի։ — Բարի վկայութեան առանձնաշնորհում։ ո՛չ ոք ջնջած է, զեղծուած միայն արգիլուած՝ իւր սարօքն։ Բայց ո՞վ չի տեսներ որ անիրաւ պատրուակներով հասարակութեան հիմը քայքայեցին, ամէնէն կենսական իրաւունքները ոչնչացուցին։ Եւ դեռ յանդգնօրէն օրինաւոր կաթողիկոս մը, Ս. Քահանայապետէն ձանչցուած ու պաշտպանուած, չեն ուզեր ձանչնալ և անոր հպատակիլ, և ամբարտաւանութեամբ և ապստամբական ոգւով միշտ կը գործածեն։ — Կաթողիկոսը իսսաւարնէս պուլընան — անիրաւ, նախատալից և հերձուածողական ոճը։ Քահանայապետը իրենց պիտի հնազանդի։ Կ'ուզեն, կը պահանջեն հերետիկոս եկեղեցիներու քրիստոնէաջինջ ստորութիւնները ներմուծել կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ, Եւ կը պարծին կաթողիկէ անուամբ!...

Ճշմարտ կաթողիկէն պէտք է անպայման հնազանդի Ս. Քահանայապետին վճիռներուն և հրամաններուն։ Ա՛յնքան տրամաբանական է այս եղբակացութիւնը, որ այլադաւաններն անգամ կը հաստատեն զայն։

Իսկ երբ ցայսլայր համբուած ճշմարտութիւններն ըսենք, կը նախատուինք իբր կծու, խիստ, անեղբայրասէր ոճի տէր։ բայց մարդիկներու ամենաքաղցրն եղող բարի և սուրբ Յրանչիսկոս Սալէզեանի մէկ խօսքը յիշեցնենք և զու՛ք դատեցէք և գո՛ւք եղբակացուցէք։ նա ալ խմբագիր եղաւ և ճշմարտութեան թշնամիներուն դէմ մաքառեցաւ իր թերթին մէջ, և ի մէջ այլոց բաղմացըսաւ։ Ասոնք պարեմոսաբար սուս կը խօսին (Ils mentent puamment)։ Տեսա՛ք բանաճեւը։ Բանն ան է որ ստողը չուղեր իր անունը լսել։ Իսկ մինք ոչ թէ կիրքը պաշտօններու եւ յամաններու, այլ զգաստանալու բարի կամք ունեցողներու կը խօսինք։

Եւ կը խօսինք միւր իրաւունքովը, զի պարտք ունինք խօսելու, քարոզելու, աղաղակելու։ կարելի է անոնցմէ գոմանս փրկենք... գոնէ միամիտները լուսաւորենք ու ազատենք։

տար պիր այսոնըզ գարչըպրնտա, սօգաղար-
տա, մէյտան մահալլէրինտէ, տօսթլարը միւ-
վաճէհէսինտէ, հիսապըզ պիր խալզ դարչը-
սընտա, տիւշմէնլէրինին ատալէթլէ տօլու,
միւթէրիզ կէօղլէրի էօնիւնտէ եաքմըշ պու-
լունաուզը հէմաարլարըն գաթիէն շիւպէ
իթմէտիքլէրի պու միւճիզաթլարա հիշ պիր
ինսանի սուրէթլէ մանա վէրիլէմէհէճէյի-
նի, վէ ծնլարա գարչը սէրտ էտիլէն թա-
պիի, թէսալվուֆի վէ իլմի միւճիքիւնտիզ-
լիքլէրին հիշ պիրինին գէրէ գատար էհէմ-
մէյէթի օլմաարլընը իսպաթ էյլէմէք տիր:
Իշթէ պիրինճի թարիզ պունտան իսպրէթ
տիր: Պու թարիզ էսկի տին միւսաֆիլէրինին
զայէյի քէմալա իսալ էյլէմիշ օլտուզլարը
թարիզ վէ տ.սուլ տըր:

Իքինճի պիր թարիզ տահա վարտըր քի
տահա կիւզէլ վէ իշպու քիթապըմըշին ֆիք-
րինէ տէ տահա մութապըզ տըր: Պու իքինճի
թարիզ իտէ, պալատէ գիք օլունան ֆիլիլէր
հէր նէ տէ օլաւար, Յիսուս Քրիստոսըն ծն-
լարը ինսանլընը մաֆէվինտէ օլան պիր
սուրէթտէ իճրա էթմիշ օլտուզլընը իսպաթ
էթմէք տիր: Արթըզ օ իշլէրէ քէնտի գահի-
րի թէֆէրրուաթլարընա նազարէն պագմա-
յուպ, պիզգաթ օ ֆիլիլէրի թէտգիզ էթմէք
տիր: Պիր չիլէյին բայիհասընըն տահա էյի
ինթիշար էթմէսի իշուն եաքրապլարընը ուշ-
տըղըմըզ կիպի, Յիսուս Քրիստոսըն եաքրազ-
լարընը տախի աչմապ վէ պիր շէքլի ախէր
ալթընտա ծնուն հազըզի սիմապընը միշտահա-
տէ էթմէք, ծնուն պէօյիւք վէ նուրանի
ֆիքրինի, ալի գալպինի, հայրէթպախշ ֆա-
զիլէթինի վէ ալլահլըզընըն էն իւքսէք պիր
ինթիպաընը պուլմապ տըր: Չաթէն Յիսու-
սըն եաքրազլարընը եաքապիլմէք իշուն Ալ-
լահ օլմապ իճապ էտէրտի: Փագաթ ծնլարը
քէնտինին եաքրազը կիպի եաքապիլմէք ի-
շուն, Ալլահ օլմապ շարթը մութլապ իտի:
Իշթէ իքինճի թարիզ տէ պունտան իսպրէթ
տիր: Պիզ պու իքինճի թարիզի պիրինճիսինէ
թէրճիհ էտէրիզ վէ շիմտիլիք պու իքինճի
թարիզի թութաճազըզ, Պու ուսուլ միւտէզ-
գիլէր վէ շիւպէ էտէնլէրին ֆիքրինտէ թէ-
րէտտիւտէ չօզ մէյտան պրագմապ. գալպին

րուէթինէ կէնիշ պիր ուֆուզ աշար, վէ
պու կիպի-մատտէլէրտէ սահիհ հաքիմ օլան
վիճաան իւզէրինէ իճրայի թէհէսիթ էյլէր,
վէ սէրտ օլունան պիլ ճիւմլէ պու սէպէպլէր
իշուն, Յիսուս Քրիստոսը թանրմապ եօլուն-
տա գաթի վէ եէնի պիր աուրմալապիլմէմիզէ
զայէթ միւսախտ տիր:

Պագէն սօրարլար քի խէլապըսարըն թէ-
շէպպիւս էյլէտիյի իշլէրտէ միւլէֆֆապ օլ-
մապը վէ ումուճըն մուհապէթ ու թէվէճ-
ճիւհիւնէ մազհար պուլունմասընըն սէպէպի
նէ տիր: Պու սիւալա ինսանըն շու ճէվապը
վէրէճէյի կէլիլ: «Պունըն սէպէպի, ծնը թա-
պիաթըն ֆէվգինտէ կէօսթէրէրէք հէր քէսի
այաղլարընա գաքսնմայա մէճպուր էտէն
միւճիզաթլարը տըր:» Պագաթ պու ճէվապ
քէք նօգան պիր ճէվապ տըր: Յիսուս Քրիս-
տոս հիշ պիր միւճիզաթ իշլէմէքսիլընտէ ա-
լէմի քէնտի այաղլարընա գաքանմազա մէճ-
պուր էտէպիլիթտի, պունուն աքսի օլարապ
պիր պիրինտէն տահա քարլաք օլմապ շար-
թըյա պին պիր միւճիզաթ իշլէսէ տէ, ծն-
լարա ախլաֆի կիւզէլլիք, թաթլըլըզ, ինթի-
յաթ, նիհայէթսիզ մէհապպէթ կիպի քէնտի-
նէ մախսուս օլան անվալը մէզճ էթմիշ օլ-
մասայտը, րուշարը քէնտինէ ճէլպ էտէճէք
եէրտէ, քէնտինտէն ուզապլաշտըրաճապ վէ
հաթթա իւքթիւտէճէքտի: Տէրին միւսապ-
զըզլարտան պիրինին տէտիյի կիպի «Յէվզ
էթ թապիաթ պիր գուլվէթէ մալիք օլմապ,
էսկի տաէմլէրին ֆիքրինճէ մութլազա պիր
Ալլահ վէ էյիլիք տէմէք տէյիլտի: Պիւ կի-
պիլէր էյի րուշարա մէհսուպ զանն օլուն-
տուզլարը կիպի ֆէնա րուշարա տա մէն-
սուպ զանն օլունուրլար վէ էքսէրիա հիւր-
մէթտէն զիյաաէ նէֆիլթէ սէպէպ օլուրլար-
տը: Քրիստոսըն՝ պու գուլվէթի մէվգիի իճ-
րայէ գօտուզը վապըթ, կէօրթնլէրին իւզէ-
րինտէ հառը օլան իլք թէհէտէթ պիր ալ-
թիւսթլիւք վէ պիր էնտիշէ թէհէսիթի իտի,
շէօյլէ քի խալք ծնուն եաքրազլարընը կէօ-
րէրէք թէաճիւպ վէ իւքսթիլէ էյլէմէքտէն
զիյաաէ պէօյլէ պիր տէշէթէֆզա վիճուարն
հուզուրընտան գաչմապ միւթէմայիլ պու-
լունուրտը: Պիզգաթ Պեսրոս պիլէ էֆէնտի-

սինին թապիաթընը վէ մագաստընը թէճա-
հիւլ էտէմէյէճէք գաստար ծնը թանըտըղը
պիր սըրատա Բրիտտոսա քէնտիսինաէն ու-
զազլաշմասը իչուէն լիճա էտիյօր: Վէ Տիբէր-
եալլար տա քէնտի սահիլլէրինտէն թէպա-
իւտ իթմէսինի իլթիմաս էլլէյօրլար:

(Մատաւսի վար)

ԵՐ. ՏԵՐ ԿՈՍԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վ. Ս. Ս Ն.

յեթիւն ժամանակիս ազգիս մերոյ հախառախութեան
որ ընդ միմեանս վասն Դատողիկոյրեան, եւ յա-
ղագս որոյ յայտնելոյ ումեմ երկրորդ յուսատոյի
կոչեցելոյ յոմանց, եւ վասն նախն գործոց եւ
վարուցն, եւ վասն համախոհից նորին:

(Շար.)

Դէպ եղեւ զի զքահանայ մի արգիլեաց
յեղեկեցելոյ վասն անիրաւ ամբաստանութեան
նորին թշնամեացն եւ շատ ոմանք բարեխո-
սեցին վասն նորա առ Փաթրիկն եւ ոչ լուաւ
նոցա: Վասն որոյ եւ ոմն ի ժողովրդեանէ նո-
րին իբր թէ զբարերարութիւնս կամեցեալ
առնել քահանային իւրոյ, գնացեալ արդու-
հալ ետ Ղայմախամին վասն քահանային,
խնդրելով ի նմանէ զի դատաւորն տեսցէ ի-
րաւամբ զդատաստան նորա, քանի, առէ,
Փաթրիկն անիրաւութեամբ եւ առանց դա-
տաստանի դատեաց եւ արգիլեաց զնա յիկե-
ղեցելոյ:

Եւ մինչ արգուհալ տալն առն այնմիկ, ա-
ռաքեաց զնա առ քեանեայն իւր, եւ նա կա-
լեալ զնա եւ էարկ ի բանտ եւ գոտան ի կա-
ճեղս: Եւ լու եղեալ Փաթրիկին եւ եկեալ
հետս զնա ի բանտի: Յայնժամ եհարց զնա
Փաթրիկն եւ առէ. «առա՛ ինձ ո՛վ թշուառա-
կան, վասն ո՞յր արարիւր զարգունալն, վասն
քո՞ եթէ վասն այլոյ ուրուք: Առէ այրն վասն
քահանային խոյ զոր արգիլեալ ես: Առէ ցնա
Փաթրիկն, քահանայն քո առաց թէ ե՛րթ
արգուհալ արա վասն իմ, եթէ զու ըստ ին-
քեան: արարեր: Յայնժամ երկուցեալ այրն

կարճամիտ եւ թեթեւախել, զի ինքն մատ-
նեալ գոլով եւ զայլսն եւ մատնեաց այնու-
դիտաւորութեամբ եթէ զայլս մատնեցից զի
ես ազատեցայց ի ձեռաց անօրինիս այսորիկ:
Եւ ասաց նմա թէ քահանան տան իմոյ եւ
արք այլք չարք խրատեալ զիս եւ ետուն
զարգունալս ի ձեռս իմ եւ առաքեցին զիս
այօր: Յայնժամ առէ ցնա Փաթրիկն. Ամէն
ասեմ քեզ ոչ ելանես աստի մինչեւ գտանի-
ցես զնոսա եւ բերցես առ իս. եւ եթէ ոչ առ-
ցես զնոսա ի ձեռս իմ, փոխանակ նոցա զքեզ
ի քիւրէկ առաքեցից: Արդ՝ մնացեալ այրն
այն ի բանտի զաւուրս չորս, եւ բազումք
վասն նորա աղաչեցին եւ ոչ արձակեաց զնա:
Վասն որոյ ի չորրորդումն աւուր զմի մարդ
ի չորից արանցն որ անխիղճ էր յայսմ գոր-
ծոյ՝ կալան զնա եւ եղին ի կոճեղս: Եւ ա-
պա հրաման առեալ յամիրայէն չափուչօք եւ
մոմձօք, մուպաշիրօք եւ այլովք տաճկօք
թէպոյիլ եղեալ քահանայիւք, այսինքն այ-
լափոխեալ կերպարանօք. եւ այրն մատնիչ
ընդ նոսա հանդերձ իմամօք եւ մէզինօք՝ ե-
կեալ կոխեցին գտունս այլոց քրիստոնէից,
որք ամենեւին ի գործս յայս ոչ էին հա-
ղորդք կամ խորհրդակիցք. եւ խուզեալ որո-
նէին գտունսն, անդ եւ աստ, յառաստաղս
տանց, ի պատուհանս, ի խորխորատ տեղիս
տանցն որոնեալ ոչ գտին, եւ ապա զգանա-
զան անս տուեալ նոցա երկեցուցանէին զբը-
նակիչս տանցն եւ զընտանիս նոցին, յայտնել
զնոսա թէ ո՛ւր իցեն թագուցեալք եւ խըն-
դրեալք ի նոցանէ ճշդիւ զբրախի² եւ ըմ-
պէին իբրեւ զհարսանիս: Եւ իբրեւ ոչ գտին
զնոսա ապա կալան զծանօթս եւ զարեանա-
ռուս նոցին եւ արկին ի բանտ եւ ի կոճեղս:
Բայց ի կոխելն նոցա գտունս³ եւ յորոնելն ի
թաղս արանց այնոցիկ՝ այլազգիքն ոչ այն-
քան խրոխտային, որքան դեաւլուկ քահա-
նայքն այնոքիկ՝ որք համախոհք էին Փաթ-
րիկին, որ եկեալ էին մէկ երկու աշխարհա-

¹ Միւլէզզիմ, երգասաց՝ մղկիթներու մէջ:

² Բազր, օղի:

³ Թրքերէն ոճ՝ էվ պատմագ, պատճառպէս բայց
յոնկարծակի մտնել տան մէջ՝ խոյլ եւ խեղիւր ընելու
համար:

կանօք ի կոխել զտունս : Մինչ գրեթէ ո՛վ կարէ ի դիր արկանել զպէսպէս հայհոյութիւնս նոցա որք արտաբերէին իբրեւ զգեւաբախեալս , և որպէս զգազանս արեան ծաւաւիս , որք կատաղեալք շրջէին , գոչէին , պոռային և ոռնային և կամէին կլանել զնոսա . ճշմարիտ ասեմ և ո՛չ ստեմ , զի այնքան վառեալք էին ի մոլութիւն բարկութեան և շլացեալ ի մտաց , և անբանացեալք ի բանականութենէ և անկեալք ի խելաց , զի ոչ գիտէին թէ զի՞նչ խօսէին և կամ թէ զի՞նչ գործէին : Արդ այսպիսի հրով բորբոքեալք և քան զհօւրան իստամպօլու՝ յոյժ տոռեւեալք և զայրապնեալք . քանզի զորս պատնէին զանմեզս ի հօւր արկանէին , կիզէին , այրէին , քակէին , քանդէին , քայքայէին , տապալէին եւ խորտակեալ կործանէին եւ ամենեւին ումեք ոչ խղճային եւ խնայէին . եւ ոչ ումեք լսէին : Վասն որոյ ամենայն քաղաքն պակեալք , ապշեալք , յիմարեալք լինէին դիտունքն , խոհեմքն եւ իմաստունքն , որպէս յաւուրս Նեոխն , մտախորհք լինելով թէ զի՞նչ լինելոց իցէ այս : Իսկ յիմարքն եւ խմարքն , տխմար եւ տրգէտ ամբոխն խաժամուժ կարծէին թէ Լուսաւորիչ յայտնեցաւ մեզ կամ թէ սոքա առնելով զՍ . Լուսաւորչի հաւատն հաստատել կամին : Քանզի այնպէս պարծէին զոր յետ ժամանակաց տեսին զպտուղն նոցա , եթէ հաստատուիչք էին թէ ապալիչք :

Բայց զվերոյ գրեալ զարան եւ զորս կալան ի ձեռն մատնչին՝ տարեալ եղին ի կոճեղս ամիրային , եւ յետ աւուրց ինչ տուեալ զբաղում կաշառս եւ զտուգանս իւրաքանչիւրքն ըստ կարեաց , եւ հազիւ արձակեցան : Արդ այսպիսի եղկութեամբ եւ մնային Ստամպոլցիք յամենայն կողմանս քաղաքին , եւ սարսեալ դողային ի Փաթրկէն յայնմանէ , զի նա եւս քան զեւս առաւելոյր բռնութեամբ ըստ օրինի յոմանց փաշայիցն այլապեաց , քանզի զնմանութիւնս նոցին յինքն բերեալ ամենայն կերպիւ . քանզի ունեւորով առաջի իւր զաղայս մատաղաւս եւ փախուկս ,

գեղեցկատեսիլս եւ զարդարեցեալս պէսպէս յօրինուածովք , հանդերձիւք ասեմ և այլովք մասամբք , որպէս տեսեալ իցէք ի դրունս բռնաւորաց , այսինքն զիջօղլանիս¹ նոցա , որ նոցա վայել է միայն , որք զթագաւորութիւնս ունին և ոչ մեզ Բրիտտոսի աշակերտելոցս : Եւ զարձեալ զպատճառս յօղելով յոմանց զգրամս փոխս պահանջէր , և զոմանս հարկէր զի քէֆիլ լիցին նմա և յորժամ քէֆիլ ոչ լինէին վասն զրամի և ոչ տային զգրամս , յայնժամ զնոսա Փաթուլիկ և Ֆուանկ կոչելով բռնաւորաց մատնէր . իսկ և զոմանս բանադրէր և տուգանելով զնոսա , և ապա հեշտանայր : Մանաւանդ զբազումս պատրէր խաբէութեամբ , երդուելով չարաչար՝ մինչեւ զնոսա որսայր և ի պեղեալ գութն արկանէր , և յետ այնորիկ անցեալ զերդմամբ նեղէր և կշտամբէր . մինչեւ ըստ կամացն իւրոց զայն ի կատար հանէր :

Արդ զայս կամիմ հարցանել ձեզ , պատուելի հարք և եղբարք , տո՛ւք ինձ զպատասխանի վաքն Աստուծոյ : «Միթէ լուեա՞լ է ձեր ի վաղեմի ժամանակաց ի հարց և ի նախնեաց անտի եթէ ոք ի փառաւոր հայրապետացն մեր , ի պատրիարքաց և կամ յեպիսկոպոսաց կամ ի վարդապետաց ոք , եթէ երբէք զՊատարագ մատոյց հովօք , այսինքն ելիեզեով , Գրիտեմ զի պատասխանելոց էք ինձ թէ իմադ եպիսկոպոս Մեծի Սրբոյն Ներսէսի պճնող էր և ձիասէր , որ և երկվարու շրջէր . այո՛՜ գիտեմ եւ ես , բայց տե՛ս դու զի՞նչ ասէ պատմութիւն , թէ վասն յանդիմանութեան թագաւորին զայն եւս ի բաց ընկէց և աղա իշով շրջէր այնուհետեւ : Դարձեալ եթէ ասիցէք ինձ վասն Յովհաննու Օձնեցւոյն , զի գրեալ է թէ նա ոսկեթիկեալ զարդարէր զմօրուսն և զդէմս իւր : Բայց ի պատասխանի գոռոզին տաճկաց ասէ թէ այսպէս զարդարեմք վասն տեսութեան ուսմկին : Թէպէտ այլ ոք գտանիցի եւս՝ չէ զարմանք : Սակայն ի Սրբոյն Գրիգորէ մեր Լուսաւորչէն մինչեւ ցայսօր , լուսաք յուս-

¹ Պոլսոյ հրդեհները , որ միշտ ձախող հաշակ հանած են :

¹ Արքային ու մեծամեծաց պալատներուն մէջ ալլեւալլ ծառայութիւններու սահմանուած և պատուակալ պատանիներ :

տեք: Թէպէտ մեք ըստ կարեաց մերոց ի բաղմաց պատմագրաց զսակաւ տեսաք: Բայց այսպիսի իր երբէք ոչ լուաք ամենեւին: Եթէ յամենայն ազգս քրիստոնէից ի հայրապետս, ի պատրիարկս, յեպիսկոպոսս և ի վարդապետս նոցունց յորժամ զՊատարագ մատոյց ոք ի նոցանէ և հովիւք կանգնեալք յաջմէ և յահեկէ հովմահարէին զպատարագիւն: Բայց սա ի Ս. Եկեղեցի Սրբուհւոյ Տիրամօր Կուսին որ ի Կոստանդնուպոլիս, ի Գումրիս, ի պատարագիւն իւրում, յաջմէ և յահեկէ կանգնեալք մանուկ տղայք առնթեր Ս. Սեղանոյն հովհօք հովմահարէին: Իսկ եթէ օրէն և սահման իցէ այս, և եթէ արար ոք ի սրբոց հայրապետացն մերոց՝ ես ոչ զիտեմ, դուք զիտանջիք: Դարձեալ սոքա բազում համարձակութեամբ օրհնաբանէին ի խօսս և ի բանս իւրեանց, նաև ի քարոզս թէ մեք զՍ. Լուսաւորչի զօրէնս և զկանոնսն ջանամք վերստին հաստատել, զոր Ֆուսկացեալք և Կաթողիկէ խնայթեալ քանդեալ և քայքայեալ են: Արդ՝ լուր դուայժմ, զի յաւուրս յայտոսիկ ոմն Յրիստոնեայ այլի գոլով և ապրանաց քէր, կամեցեալ կրկին ամուսնանալ և վասն չնաս գոլոյն մատուցեալ առ Ամասիացի Յովհաննէս վարդապետն որ վէճիւն էր Աւետիք Փաթրիկին, և տուեալ նմա յիսուն զրուշ և հաճեալ զկամս նորա՝ և նա հրամայեաց քանանայից պսակել զնա և պսակեցին. և յետ երկու աւուրց եկեալ առաջին գոքանչ առն ամուսնացելոյ և արար զպանգատս առաջի Աւետիք Փաթրիկին, ասելով թէ «Դուք միշտ պարծիք զՍ. Լուսաւորչի զօրէնսն հաստատեմք, ապա ընդէ՞ր հրաման տուիք միեւն իմոյ գնտին և մեղօք ամուսնանալ»:

Եւ սա առժամայն կոչեալ զվէճիւն իւր զԱմասիացի վարդապետն, որ զյիսուն զրուշն առեալ էր և արգարացուցեալ զնա և ասէցնա թէ ընդէ՞ր արարեր զայս. և գանեալ զնա յայնմ պահուն և եղ ի չղթայս:

Զայս առնելով յայս ուսմիկն իբր թէ օրինաց վրէժխնդրութիւն ցուցանելով, զի պատրեալ զնոսա այսու և հաճոյացի նոցա՝ և զամուսնացեալ այն բանագրեաց և հրա-

մայեաց քակել զպսակն և արձակել ի միմեանց: Արդ զիսորդ յերկարեցից զբանս, քանզի յետ աւուրց՝ ի վերայ յիսուն զրուշին առաջնոյ՝ զոր վէճիւն առեալ էր, ինքն ևս յաւել և էառ ի նոյն յառնէ այլեւս երեք հարիւր և յիսուն զրուշ, որ եղև չորս հարիւր և ապա զգիր օրհնութեան ետ նմա և արդարացոյց. և վասն այն զվէճիւն գանեաց և բանտեաց թէ սակաւ դրամով ոչ արդարանայ այսպիսի մեղօքս հէ՛յ էչէք, ալ բազում դրամով արդարանայ և սրբի: Թէպէտ յետոյ այն այն ի ձեռն բռնաւորաց ֆէրմանով յետս պահանջեաց զչորեքհարիւր զրուշն և էառ յԱւետիք Փաթրիկին. և որք լուանն ի ի յայլազկեաց զարմացեալ հայհոյին ասելով, եթէ զնիքեայի՝ դրամն չորս հարիւր զրուշ ոչ երբեք լուեալ է մեր:

(Շարունակելի)

ԼՈՒԻ ՎԵՕՅԵՕ ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՄԵՋ

(Շար.)

Պիտի չգարմանաք անշուշտ անոր պարպուրդը սիրելուն վրայ: Պարպուրդը կը սիրեն նոյն իսկ անոնք որ անոր արժանի չեն եղած, ինք, տարուան գոնէ տան ամիսը, առիւծիւ պէս կռուած էր: Աջ ձախ, ամէն օր ամէն վայրկեան, զիմագրաւ կռուեր էր սուրբ հիկեղեցոյ թշնամիներուն դէմ: Այդ օրերուն ամէն մէկը կոտորած մըն էր, և ապահով եմ որ գիշերը, երազին մէջ կը տեսնէր դրօշներու ծածանումներ և սուրբու ընդհարումներ: Երբէք թոյլցած չէր. բայց կ'ենթադրեմ որ երբեմն յոգնած էր: Ահ, ի՞նչ ուրախութիւն, թողու իւնիվերի գրասենեակը, մէկ գի զնիւ զէնքն ու զրահը. և մէկ քանի օրուան համար ըլլալ ուրիշներուն պէս մարդ մը, յօժարովի պիտի ընէի քաղաքատարազ զինուոր մը: Զարմացումը այնքան ախորժելի է որ քնքօրէն կը նմանցուի ճորտ արձակուած շան մը որ կը հաջէ, կ'ոտոտոտէ կը նեա-

Նիքեան, պսակ ամուսնութեան:

ուրի ուրիշներուն սրունքն ի վեր հակառակ կայքի դիրքի և ողջմտութեան ամէն կանոններուն: Քիչ վերջը, պարոններ, իրաւունք պիտի ունենաք խայտալու ցատկաւորութեամբ, խօս խաղեր ընելու վարժարանին սեմին վրայ, բայց ոչ երբեք Լուի Վէօյեոյի չափ:

Ուստի կը մեկնէր: Եւ այս մարտիկը շատ զուարթ էր պարապուրդի ատեն: Զուարթութիւնը, պարոններ, առաքինութիւն է. և մի՛ կարծէք թէ Լուի Վէօյեոյի օրով ան մշակուած չէր այնչափ: Այն միջոցին վիպականութիւնը կ'իշխէր: Պուալոյի ողբագին եղերերգութեան կը հետեւէին մարդիկ. արձակ մազերն ու սուգի երկայն զգեստները ժամանակին նորաձեւութիւններն էին: Մարդոց սիրտը վիրաւոր էր և աչքը առատահոս ջրորդան: Մարդիկ կ'երթային, կ'արտասուէին Պոլոնէսական ծովափին վրայ, կը հեծէին լիճերու եզերքը, լուսնի դէմ կը գոչէին, և այս ամէնը կը կոչէին «խորագինին կեանք»: Սպոյս և չղարշին գինը խօս համեմատութիւններ առած էր, որովհետեւ ամէն մարդ զայն կը կրէր: Լուի Վէօյեո վիպապաշտ չէր որովհետեւ Քրիստոնեայ էր: «Աստուած ժպտադէմ է—կը կրէր ան օր մը:—Երկինքէն անդադար կ'իջնան ժպիտներ: Հոգիէն, ուր ան կը բնակի, մշտապէս ժպիտ մը ելլելու է: Քրիստոնեան չի խոթորի ոչ մարդոց ոչ իրաց դէմ. անիկայ զԱստուած կը տեսնէ անոնց մէջ»: Ահ, որքան սրտանց կը խնդար Պարապուրդի ճամբուն վրայ: Կը խնդար ամէն բանի վրայ եւ ամէն ոչինչ բանի վրայ կը խնդար այն ժողովրդապետներուն սեղանին վրայ որ զանկայ: Կ'ընդունէին իրենց յարկին տակ, եւ անոր կ'ընծայէին իրենց ամեն վաղեմի ներքնաստան ամենահին գինին. «Ժողովրդապետները,—կ'ըսէր— երբ զիս կը տեսնեն ուրախութիւնսն իրենք իրենցմէ դուրս կ'ելլեն. ես եղած եմ զիրենք գուարճացնելու համար, իրենք ալ ասոր փոխարէնը կ'ընծայեն: Երբէք այնպէս գոհ չեմ ըլլար ինչպէս երբ կը գտնուիմ այդ պարզ, խոտակոծ, անձնանուէր հոգիներու հետ, փառք կու տամ Աստուծոյ որ զիս հաճելի ըրաւ այդ երկնային այգիին փր մշակներուն»: Ամէն բանի վրայ կը խըն-

դար, նոյն իսկ ինք իր վրայ. կը խնդար իր յօդացաւին, իր ռեզաւտին, իր միջացաւին վրայ, կը խնդար այն տպաւորութիւններուն վրայ, զորս Բլոմպիէի ցայտալուզանքը (douche), իր ուսերուն կ'ազդէր, և այն ծիածանին վրայ որ ան կը ձգէր կոնակին վերելք: Իր նամակները շարք մըն են երկայն քրքիշներու: Ահաւասիկ անոնցմէ մին որ գրուեցաւ հոս, էվրէոյի մէջ, եւ որ զձեզ պիտի պատրաստէ իրիկուան ճամբորդութեան: Վէօյեո էվրէոյի ճեպընթացին մէջն է. «Ահա ճարպի տիկ մըն է կ'ելլէ յիմարի կերպարանքով եւ չարագուշակ բարեւներով: Անիւր դեռ քսան անգամ չէր դարձած երբ ան անչնորհ կերպով ինծի մօտենալով ըսաւ. «Շատ ուրախ եմ, որ կը ճամբորդեմ բարձրութեան մը հետ: «Պարոն, ըսի իրեն, ես խորասուզուած բարձրութիւն մըն եմ. — Պարոն, պատասխանեց, այդ վրաս չ'ընեն, միշտ մեծ երջանկութիւն է...» Շագոյր մը ունէր կրդին վրայ, ցանցառ տարօրինակ պերեւեշտ մը, միթագոյն թաթպաններ, սեւ զգեստ մը: Իր կերպարանքէն չէի կրնար մակարերել ինչ արհեստի տէր ըլլալը: «Ինչ կ'ընես» այս աչխարհիս վրայ:— Պարոն, ես վիրաբոյժ եմ:» Անպիսի բան մը գուշակեր էի, բայց կը տարակուսէի: Իրեն հարցուցի թէ արդեօք գաւառին օգը վէրքի կու գայ. պատասխանեց թէ ինք վիրաբոյժ-ատամնաբոյժ ըսուածներէն է. բերնի վէրքերը կը դարմանէ, ծնօտի քաղցկեղները կը բուժէ. ծնօտի ոսկրերը կը կտրէ, զղեակները կը պտտի եւ շատ մը կոմսուհիներու և մարքիզուհիներու եւ նոյն իսկ դքսուհիի մը անունները տուաւ, որոնց ընդմէջ մտերմօրէն կը մտնէ եզեր. բայց չկրցայ իրեն ըսել տալ թէ ակոյա կը քաշէ, բնաւ յանձն չառաւ...» Պարոններ, հիմա այլ եւս ճեպընթաց չկայ, բայց ատամնաբոյժ շատ կայ: Կը գտնուին միշտ մարդիկ եւ իրեր զոր Աստուած ստեղծեր է յատկապէս զմեզ զուարճացնելու եւ զբօսցնելու համար: Խնդացէ՛ք, չա՛մ խնդացէ՛ք արձակուրդի ատեն: Դպրոցական տարուն մէջ զբօսանքի օրերը ժպիտ են, յօժարակամ սապէս ձլիտի ոսկմանէի Պարապուրդը. երկուր եւքիջ մը:

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

Սեպտեմբեր 7 † Կիր. աճ. Դ. զկնի Վերափոխման
 8 † Բշ. աղ. Ա. օր պահոց Խաչին: Եւ
 9 Դշ. քճ. Բ. օր պահոց Խաչին
 10 Դշ. քճ. Գ. » » »
 11 Եշ. քճ. Դ. » » »
 12 Ուրբ. քճ. Ե. » » »
 13 Շաբ. քճ. Նաւակահակ Ս. Խաչին:

ՍՈՒՐԲ ԱԼՓՈՆՍՈՍ ԼԻԳՈՒՌԻ
 Յօճք՝ Յ Օգոստոս

(Շար.)

Վերջապէս Աստուած ծանցող մեր Սուրբին Թէ
 Կուզէ որ գործադրէ առաքելներու նոր միաբա-
 նութիւն մը հաստատելու իր զիտաւորութիւնը: Այս
 գաղափարը գործադրելու համար 1732ին Նէապոլիս
 քաղաքէն գաղտուկ հեռացաւ, և միայն մի քանի
 ընկերներու հետ գնաց Սքայա, ուր եպիսկոպոսը ար-
 գէն զինքը կանչած էր իր առաջին վանատունը բա-
 նալու և Կարգին հիմնարկութեան ձեռնամուխ ըլլա-
 լու: Իր ընկերներուն հետ գնաց բնակեցաւ խեղճ,
 խարխուլ տան մը մէջ, որուն առջեւը կը գտնուէր
 փոքրիկ պարտեզ մը: Հրաման առաւ անոր սենեակ-
 ներէն մին աղօթարանի վերածելու, ուր նոյն տար-
 ուան Նոյեմբեր 9ին, ի շնորհակալութիւն Աստուծոյ
 ընդունած պարգեւներուն, Պատարագ մատուցանելէ
 և Ձեռք Աստուած երգելէ յետոյ, հիմնեց նոր Միա-
 բանութիւնը, որ ան ատեն ըսուեցաւ մեր աստուա-
 ծային Փրկչիմ, որուն անգամները պիտի քարոզէին
 կրօնքի նպատակները պիտի մատուցանէին այն խեղճ
 գեղջուկներուն, որ ագարակներու, գիւղերու և ա-
 ւաններու մէջ զրուած տուններ բնակելով յաճախ
 զուրկ են քարոզութենէ և Ս. Խորհրդոց մատակա-
 րարութենէն: Իր առաջին ընկերները 12 հոգի էին.
 10 քահանայ և երկու փաստաբան, որ գեռ ևս Աս-
 տիճանները չէին առած. և ասոնցմէ զատ աշխատա-
 ւոր եղբայր մը, որ իրենց կը ծառայէր: Ասիկայ Վի-
 դուս Գուրսիօ կը կոչուէր, և Ագուափիվայի հա-
 հարուստներէն էր, որ Նէապոլիս մէջ ունեցած մէկ
 տեղիքին հետեւանքով, հրաժարեւր էր իր բոլոր երկ-
 րաւոր գոյքերէն և ընտրած էր այդ խոնարհ պաշ-
 տօնը նորահաստատ Կարգին մէջ: Այս առաջին հայ-
 րերուն կեանքը իրաւամբ կրնայ համեմատուիլ այն
 սուրբ ապաշխարողներու կեանքին, որու մասին կը խօսի
 Ս. Յովհաննէս Կիլիկացի իր Խորհրդական Սանդուխին
 մէջ: Իրենց բնակարանը փոքր և սոյնարմար էր. մա-
 հիճնին տախտակամածին վրայ տարածուած յարգ-
 անկողին մըն էր: Ամբողջ կերակուրնին առհասարակ
 անհամ ապուր մըն էր և քիչ մը պտուղ: Հացերնին
 սեւ էր և զայն շինող աշխատաւոր եղբոր տգիտու-
 թեան հետեւանքով գրեթէ անխմոր և ա՛յնքան կարծր

որ ուտել կարենալու համար հարկ էր նախ սանդի
 մը մէջ լոսել: Այս խեղճ ողորմելի կերակուրը կ'ու-
 տէին ծուռի վրայ եկած կամ աստիճաններէն վրայ
 երկնցած: Շաբաթը երեք անգամ ինքզինքնին կը
 ձաղկէին: Մահացողման միացուցած էին աղօթքի
 մասին ճշմարիտ ջերմեռանդութիւն մը: Դասին մէջ
 զուրցած ժամերգութենէն զատ օրը երեք անգամ
 կը հաւարուէին: Կէս ժամ աղօթք ընելու համար,
 որմէ յետոյ կէս ժամ ալ Սրբոց վարքը կը կարդային:
 Քաւորք ժամ մըն ալ յատկացուցեր էին Ս. Հաղոր-
 դութեան և Տիրամօր այցելութեան: Սակայն ցո-
 րեկուան և գիշերուան մեծ մասը կ'անցընէին Ս.
 Խորհուրդին առջեւ: Պատարարքը ամենէն չինիշ ամ-
 փոփմամբ և բարեպաշտութեամբ կը տեսնէին: Իրենց
 հանգստեան մի միակ ժամանակը ծաշէն յետոյ մէկ
 ժամ էր, որ միջոցին հոգեւոր բաներու վրայ կը խօ-
 սակցէին: Բայց Ալփոնսոս որ այս ամէն բարեպաշտու-
 կան հրահանգներուն ոգին ու շարժակն էր, կը գէր
 կ'անցներ իր բոլոր ընկերները ամէն բանի մէջ: Եւ իր
 խիստ ճշմութիւնները ծածկելու համար շատ անգամ
 կը մեկուսանար ներքնատան խորքը, ուր, ինչպէս առ
 հասարակ կը կարծուի, Կուսամայրը իրեն երեւցած է
 շատ անգամ: Սակայն չէին մոռնար երեք իրենց հաս-
 տատութեան բուն նպատակը: Իրենց քարոզութեան
 շնորհիւ Սքայայի և անոր շրջակայ վայրերուն մէջ
 կրօնական նոր ոգեւորութիւն մը սկսաւ և շատ հրա-
 շաղի դարձեր եղան:

Այս միջոցին Ալփոնսոս ուզեց կանոն մը յորինել
 իր Միաբանութեան համար: Բայց հոս սկսան դժ-
 ուարութիւնները: Անհամաձայնութիւն ծագեցաւ իր
 և իր ընկերներուն մէջ, ոմանք կ'ուզէին աւելի խիստ,
 և ոմանք աւելի հեշտ կանոն մը: Ամէնքը վերջապէս
 իրմէ հեռացան ի բաց առեալ երկու հոգի որ գեռ
 Աստիճանները չէին առած: Բայց Աստուած իրեն
 ուրիշ աւելի բաղձալութիւն ընկերներ զրկեց. այնպէս որ
 1735ին, իր Կարգին հիմնարկութենէն երեք տարի յե-
 տոյ, ի վիճակի եղաւ երեք վանատուն բանալու:

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՍԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵՒ՝ ԳՐԲԷՆ

Գիրք Ա.—Գլ. ԺԳ.—Փորձաքննութեան դէմ կեցաւ վրայ
 (Շար.)

Ամեն ցեղ փորձութիւններու սկզբնական պատ-
 ճառն է՝ հոգեւոր անհաւատութիւնը ևս Աստուծոյ վրայ
 իջ վստահութիւնը:

Ողբահեծել, ինչպէս որ զիկ յունցող ծաւ մը՝ ա-
 չիկներէն ասոյին անցին կը մղուի, այսպէս ալ բոլոր ո-
 իր առաջադրութիւններ լիակող մարդը այլեւայլ փորձ
 ձեռքներու ենթակայ կ'ըլլայ:

Կրակը՝ կը փորձէ երկաթը, և փորձութիւնը՝ ար-
 դար մարդը:

Սոսկ յեկն գիտե՜ր քե ի՛նչ քանի ծարող եմք. սա-
 կայն փորձութիւնը կը յայտնէ մեր ի՛նչ ըլլալը:

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ (*)

(Շար.)

Դ. ՏԵՍԱՐԱՆ

Եսթեր, Մուրթէ, Էլիզ, Երզնայաւոր

Եսթեր

Ո՛ր այլազգին այս տեղ մեզի կը յանդգնի մօտենալ :
Մուրթէն , ի՞նչ կը տեսնեմ : Սիրելի հայր իմ , դո՛ւն ես :
Հրեշտակն Աստուծոյ առաջնորդեց քեզի հոս ,
Ըզքե՛զ ծածկելով իր սրբազան թեւին տակ :
Բայց ինչո՞ւ խոր թախիծով ես համակուած զլիսովին :
Ինչո՞ւ համար քուրձ ես հագեր , մութիւր ցաներ զլիսուդ վրայ :
Ի՞նչ լուր բերեր ես մեզի :

Մուրթէ

Ո՛վ տարաբախտ թագուհի :
Ո՛վ անմեղ ժողովուրդին ճակատագիր դժբնդակ :
Ա՛ռ , դշխո՛յ , կարգա՛ վրճիռն անագորոյն , գարշելի ...
Ամէնքնիս կորսուած ենք , Իսրայէլի վերջն է մօտ :

Եսթեր

Ո՛վ երկինք , բոլոր արիւնս երակիս մէջ կը սառի :

Մուրթէ

Ամբողջ Հրեայ ժողովուրդին սոսկալի ջարդ պիտի տան :
Համանին արիւնարբու մատնուած ենք ամէնքնիս :
Արդէն սայրասուր պատրաստ են թուրն ու դանակ :
Բովանդակ ժողովուրդն է մատնուած կորստեան :
Համա՛նն , Ամադէկի զաւակ Համանն ամբարիշտ ,
Մեզի դէմ իրեն ամբողջ իշխանութիւնն է զիներ :
Եւ արքան դիւրահաւատ այս դատակնիքն է կնքեր :
Մեզի դէմ կանխակալուած այդ սրբապիղծ բերանով ,
Ըզմեղ կը համարի բոլոր բնութեան պժգալի :
Իր վրճիռները տրուած են , և բովանդակ երկրին մէջ
Ջարդին արհաւիրսից օրն ու ժամն է սահմանուած :
Երկինք , լոյս պիտի տա՞ս այդ կոտորածին սոսկալի :
Սուսերն ամէն հասակ և սեռ պիտի հրնձէ անխորիւր :
Վայրա՛գ անզղերու , վագրերու կեր պիտի ըլլանք ,
Եւ ո՛հ , այդ օրն , այդ անեղ օրը կը հասնի տաճն օրէն :

Եսթեր

Ո՛վ Աստուած , որ կը տեսնես այսքան դժխեմ ծրագիրներ ,

(*) Տես թիւ 409, էջ 536.

Արդեօք խալառ թողեր լըքե՛ր ես զաւակներն Յակորի :

Ամենեւն դեռաւի օրիորդներէն մին

Տէ՛ր, եթէ գուն չպաշտպանես ո՛վ պիտի զմեզ պաշտպանէ :

Մուրթի

Եսթե՛ր, թողունք արտասուքն՝ այս օրիորդաց դեռատի :
Տարաբախտիկ եղբայրներուդ յոյան է դրուած քու վըրադ :
Հարկ է սատար ըլլալ անոնց, բայց ժամերն են թանկագին :
Ժամանակը կը թռչի, կը համեի չուտ օրն ահեղ :
Ուր անուշն հրէական պիտի լինի բընաջինջ :
Այնքան սուրբ մարգարէից վառ եռանդովն առցուած
Գնա՛ թագաւորին, և ո՛վ ըլլալուդ յայանէ :

Եսթեր

Բարէ, կ'անդիտանաս թէ ո՛րքան խիստ օրէնքներ
Թագաւորները կը ծածկեն աչքէն երկչոտ մահացուաց :
Անոնց տէրջութիւնն օգոստափառ կ'ախորժի՝
Պալատին մէջ մինալ իրենց հրպատակաց անծանօթ :
Եւ անլըքեպ մահն է բաժին այն անխորհուրդ ժպիրին ,
Որ կ'իշխէ չը կոչուած անոնց առջեւ ելլելու ,
Թէ որ արքան իսկոյն ի ցոյց յանցաւորին փրկութեան՝
Իր մականն ահաւոր անոր չըտայ համբուրել :
Այս չարաղէտ խիստ հրամանէն ոչինչ կ'ընէ մէկը զերծ ,
Ո՛չ սեռն, ո՛չ աստիճանն . ոճիրն է ճիշտ հաւասար :
Ես անգամ որ իրեն քով, իրեն աթոռն եմ բազմեր ,
Ես անգամ այլոց պէս եմ այս օրէնքին ենթակայ :
Եւ խօսելու համար իր հետն, առանց կանխաւ լուր տալու,
Պէտք է որ ինքը զիս փնտռէ կամ թէ գոնէ կանչել տայ :

Մուրթի

Ի՛նչ, երբ կորուսան իսպառապուռ հայրենիքիդ կը տեսնես
Եսթեր, կեանքդ տակաւին բանի մը տե՛ղ կը դընես,
Կը խօսի Տէրն, և զայրոյթէն մարդու մը դեռ կը վախնա՞ս :
Ո՛հ ի՛նչ կ'ըսեմ, կեանքդ Եսթեր, կեանքդ միթէ քո՛ւկըդ է :
Այն արեան չէ՞, այն տոհմին չէ՞ որմէ սերած իջած ես :
Աստուծոյ չէ՞, որմէ գուն զայն ձըրիաբար առած ես :
Եւ ո՛վ գիտէ թէ լոկ ազգին ազատութեան համար չէ՞ր
Որ ըզքեզ բարձրացուց այդ արքունական գահին վրայ :
Եսթեր, լա՛ւ մըտածէ, Աստուած ըզքեզ ընտրած չէ ,
Որ Ասիոյ ժողովրդոյ ըլլաս ունայն տեսարան ,
Կամ անհաւատ Հեթանոսաց աչքը յայրատ հրապուրես :
Կը սահմանէ Տէրն իր սուրբին աղետալոյն գործերու :
Անոր ժառանգութեան, անուան համար զո՞ք ըլլալ :
Ահա՛ ճշգրիտ մասն ու բաժին Խորայէլի զաւակին :
Երջանկութիւն է վրտանգել կեանքդ իրեն ի պատիւ :

Բայց մեր ոգնութեան անիկայ ինչ պէտք ունի,
Անոր ինչ կրնան ընել թագաւորներն աշխարհի:
Վայրապար կը գումարուն մղելու քարտ տնոր դէմ:
Կ'երեւի, և բանալիներն սնունդ կ'ըլլան դիր ու ցան:
Կը խօսի, և զամէնքն խտրոյն փոշի կը դարձնէ:
Կը ձայնէ, փախուստ կուտայ ծովն ու երկինք կը սարսի:
Ամբողջ տիեզերքն անոր աչքին ոչինչ է:
Եւ իսկ'դճ մահկանացուք, սին խաղալիկք օրհասին,
Եսթե'ր, ամէնքն անոր առջեւ չըկայի նէս են խաբառ:
Համանին եղեռնաւոր յանդգնութեան թոյլ տուաւ,
Որ փորձութեան բովերուն մէջ քննէ իսկին հոանդիդ:
Ինքն է որ ինձ քովը դալու յանդգնութիւնն ազդելով,
Եսթե'ր, հաճեցաւ ընթանալ իմ առջեւէս:
Իր բարբառն ականջներուդ թէեւ հրնչէ վայրապար,
Ինքը դարձեալ ցոյց պիտի տայ զօրութիւնն իր բազուկին:
Կրնայ Համանը շրփութել, մեր շղթաները փշրել
Աշխարհիս ամէնէն տրկար սնձին միջոցով:
Եւ զո'ւն մերժելով այս մեծ շնորհքն ընդունիլ
Գուցէ, դուն կորսընիս քու բովանդակ ազգիդ հետ:

Եսթե'ր

Փութա՛ գընա, Շօշ քաղաքին մէջ սիւսըւած Հրեաներն,
Եռանդագին գիշեր ցորեկ տղօթելով քեզի հետ,
Իրենց ջերմ հոանդով թո՛ղ ըլլան ինձ օժանդակ:
Այս երեք օրն ամբողջովին պահքով ծոմով անցընեն:
Պաւարակուռ գիշերն ահա՛ տիրապետել կը սկսի:
Վաղն առաւօտ երբ արեգակն հորիզոնէն վեր ելլէ,
Ես մեռնելո՛ւ հաճ և հաւան, եթէ հարկ է որ մեռնիմ,
Հայրենիքիս սիրոյն համար պիտի երթամ զոհուելու:
Պահ մը մինա՛կ թողէք զիս:

Երգչախումբը կը բառւի քաջասքանիսն խոր

(Շարունակելի)

ԷՍԿԻ ՎԷ ԵՆՆԻ ՎԱՍԻՅԷԹԼԷՐ

— Մատամ Պօպօն, սու տէտիքէրինիդէ
բէք ինանաճաղըմ կէլմէյօր:

— Պիլիսինիդ քի պէն պիր նամուսը
վալիտէյիմ, շու հալտէ սէօզիւմէ իթիմատ ի-
տինիդ: Օղլում բուհպան մէքթէպինէ տէվամ
իթտիքճէ պանա հիւքիւմէթ սանարղընտան
հիչ պիր իսնէ վերիյէմէյէճէյի աչըգտան ա-
չըղա պէլէտիյէ տտիրէսինտէ պանս սէօյ-
լէնիլտի:

Պիչարէ գատըն միւնֆաիլ պիր հալտէ
պուսը հիքէայէ իտիյօրսը:

Մ. Լաֆլօրի իսէ էլլէրինի կէօքսիւ իւ-
զէրինտէ գովուչարրմը միւթէհայեիր պիր
սուրէթտէ ծնա պաղըյօրսը:

— Մատամ, պէն զանն իտէրտիմ քի
մուսվէնէթի բէսմիյէյէ մէմուր օլանլար պու
գատար իլէրի կիթմէղլէր... է՛, պաղալըմ
սիդ նէ ճէվաղ վէրյսինիդ:

— Պէնիմ վէրսիլիմ ճէվապ շու օլտու
քի, լանէթ օլտուն օ քէնտիլէրին վէրսիլի

էքմէք բուսուլաւորնա տա , խանէլէրինէ տէ .
պէն օղլումըն պիր քէօրէք կիպի թէրպիյէ
օլմասընա գաթիէն գայիլ օլամամ :

— Աչգ օլսուն . . . :

Պու ֆազլլէ քէնտի մասաւորնա կիտէրէք
պիր չէքմէքէ աչըպ ,

— Մատամ Պօաշօն , շունը ալընըզ , սի-
զին էքմէք բուսուլաւորնը պէն գապուլ ի-
տէրիմ , տէյէրէք գաթույա գատար օնա ըէ-
ֆագաթ իթտիքսէն սօնրա .

— Ա խայինէր , տէյէրէք թէգրար օտա-
սընա ալտէթ իտէր :

*
* *

Մ . Լաֆլօրի ալթմըշընը կէշմիշ , ագ սաշ-
լը , տիւշկիւն պըլըզլը , էյիթ պուրուշու ,
գըսաճա պօյլը , շիշմանճա պիր առամ իտի . . . :
Պագըշը սէրթ , վէ ֆիքրինտէքի բրօթէլէր-
լէ ուղրաշարագ , կէզտիյի վագըթ , էլի ար-
գասընտա վէ կէօզիւ կիւնէշտէ , սահիպի
սէրվէթ պիր քիպարտան զիյատէ , առէթա
պիր ֆէսատ թէսավուրուլա ուղրաշան պիր
քիմսէ հալինի իրայէ իտէրտի :

Էօմրիւ իշինտէ չօգ թէէմմիւլ իթմիշ , չօգ
ֆիքրի եօրմուշտը . ֆագաթ էմէյի հէպայի
մէնտուր օլմամըշտը . չիւնքի , չէրչիլիքտէն
պաշլաշարագ բէյտէր բէյ թիւճճար , էմլաք
սահիպի , վարիտաթ սահիպի վէ սէրմայէտար
օլապիլմիշտի . . . : Պիր միլիօնլըզ սէրվէթի վար
տէնիլիյօրտը , պագիլէրի տէ իքի միլիօն
թախմին իտիյօրլարտը . . . :

Մ . Լաֆլօրի օտասընա կիրէրէք , էլի ար-
գասընտա պաշլաշարագ զայէթ միւթէէմմիլ պիր
սուրէթտէ կիտիպ կէլմէյէ :

— Պու խապէր պիր էսէրի տարպէ կիպի պէ-
նի միւթէէսիր էյլէտի . պիշարէ գատընճը-
զագ խաթըրնտան պիլէ կէշիլէմէզ քի պէն
վար օլան սէրվէթիմի օ հիւ քիւմէթէն իանէ
սանտըղընա վէրիյօրմ . . . :

Պու միւթէպէր գաթ չէրչիլիյի գէմանըն-
տա տուլ գալմըշտը , իքի էվլատլարընտան
պիրի , թօնքինտէ պիր սիւահ տարպէսիլլէ ,
օ պիրի տէ , թիֆօ խաաթալիկիլլէ թէրքի
հայաթ իթմիշլէրսի : Պու մաթէմէր արա-
սընտա , հիշ պիր եագըն ապըրպասը օլմատը-

ղընտան , նիյնէթ գօմուշտը քի սէրվէթինի
էֆալը խայրիյէյէ նարֆ իթսին . . . :

— Գաթօլիկ միւթսսէսէլէրինի գանուէն-
վարին օլամայաճագլարընտան , վասիյէթնա-
մէմ հագգընտա իթիրաղլար իտիլէճէյինի
պիլաթիլիմ իշուն բարամը հիւքիւմէթին իանէ
սանտըղընա վէրիյօրտը . . . :

Շարք խալըլարընըն իւզէրինտէ պիր իքի
ատըմ տահա աթարագ ,

— Պու պէօյլէ օլմազ , պաշգա պիր շէյ
պուլմալըլմ . . . :

Պու սըրատա օճաղըն իւթիւնտէ պիր
գատրօտա ասըլը օլան , գըզընըն քիւշիւք
ֆօթօկրաֆը միւսատըֆը նագարը օլուր :

— Աճէպա օ տինտար վէ իպատէթքար
գըզընըլագըմ , քէնտի ճէհագը իշին թախսիս
օլուշմուշ օլան բարանըն ֆրանմաոնլար է-
լինէ թէսլիմ օլուշտուղընա նէ տէյէճէք
տիր :

Հէյէճանը կիթտիքճէ արթըյօրտը :

— Բէք կիւզէլ . . . : Փագաթ հանկի խայ-
րէթէ վէրմէլի . . . :

Պու սըրատա , ճէպինտէն պիր տիւզիւմ
անախթար չըգարարագ , պուշլարտան պիր
եաուըճասընը էլինտէ թուլմուշ օլտուլը
հալտէ , օտասընըն պիր քիւշէսինտէ գահիլէն
պիր մօպիլիա շէքլինի իրայէ իտէն պիր բա-
րա գատասընա եանաշըր , պիր թարաֆտան
անախթարը սօգար , օ պիր թարաֆտան տա
քէնտի քէնտիլն ,

— Հսնկի խայրէթէ վէրմէլի . . . : Պէօյ-
լէ շէյ օլմազ . պանա պիր վարիս պուլմալը .
սէյէրէք սէօյլէնի տուրուր :

Գատալը աշար , ճիգտանընտան , գըրմըզը
միւհիւրլէ թէմիր իտիլմիշ վէ իւզէրինտէ
տէ «պու պէնիմ վասիյէթնամէմ տիր» իպա-
րէլէրինի հալի պուլուտան իրի պիր զարֆը
տիշարը չըգարարագ մասասը պաշընա կէլիլ ,
օթուրըր վէ զարֆը եըրթըպ միւնտէրիճա-
թընը օգուլմայա պաշլար :

— Պուտան գիյատէ ատի վէ պայագը

¹ Ան սէնէլէրտէ Ֆրանսատա նէլը օլուտան հագ-
սըզ գոնուշարտան պիրինի իյմա իտէր : Աիւթէր-
ճիմ :

չէյ օլամազ . հէր քէս հիւքիւմէթին իանէ
սանտրղընա վասիյէթլէր եաբըյօր , պու պիր
մօտա հիւքմիւնէ կիրմիշ տիր . . . խալըր ,
պէնիւմ արդոււմ պունտան տահա սլա պիր շէյ
եալմազ արը . . .

Էլինտէքի քեաղըտը մասսարնըն իւզէրինէ
գօմապ իւզրէ իքէն .

— Պու գասրնծըղաղըն վագասարնա մէմ-
նուն օլտում . . . եօգսա պէնիւմ թէրք իտէ-
ճէյիւմ մէսլաղ տա , պէնիւմ ըրգամ խիւաֆըն-
տա , աշխարհականնա . . . գուլլանըւ-
ճադար . . .

Սօնրա պիր աղ տահա տիւշիւնէրէք ,

— Ամնա սէրվէթիմէ քիմ սահիպ օլա-
ճազ արը , քիմէ պրագայըմ , տէր :

Պու խուսուստա տիւշիւնմէքտէ իքէն ,
օգուտուգտան սօնրա մասսարնըն իւզէրինտէ
պիր քիւշէյէ գօմուշ օլտուղը ճիւրրիյէթլէ-
րին դահրսմանը նամնիւտաքի կաղէթա նա-
զարնա իրիշիր :

(Մապաթի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Լ Ղ Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Ը

Օգոստոս 20ին, Պուլոնեքի Տիրամօր աւանդական
թափօրը, որ վերահաստատուած էր նոր քաղաքա-
պետութենէն, անպուգական շքով տեղի ունեցաւ :
Ներկաներուն թիւը 430,000ը կ'անցնէր : Վսեմ Պուա-
նը կարգիւնալը, որուն այնքան խանդավառ ընդունե-
լութիւն ըրաւ Պուլոնեք, կը նախադասէր այս սքան-
չելի տօնախմբութեան :

Սէն-Պաիտ հին անկիլգան վանքէն քսան մայ-
րապետ գարձան կաթողիկէ եղան, և Բենեգիկտան
Քոյրերուն քով իրենց նորնծայութիւնը ընելէ յետոյ,
հանգիստաւորապէս իրենց սքեմը աւելն Մենեգիկտի ե-
պիսկոպոս Հոսդին Գերապայծառէն :

Միացեալ Նահանգաց մէջ կաթողիկէ Հնգիկ-
ներու համաժողովը տեղի ունեցաւ Տագոգայի դաշ-
տերուն մէջ : Այս համաժողովը ամէն տարի կանո-
նաւորապէս կը գումարուի յուլիս ամսուն մէջ . հա-
մաժողովականները՝ համաժողովին հինգ օրերը վրան-
ներու տակ կ'անցընեն և նիստերը բաց օդի մէջ տեղի
կ'ունենան : Այս անգամ շատ բազմաթիւ էին ներ-
կաները մի քանի մասնախումբերու մէջ շատ շքեալ :

հակաճառութիւններ եղան . բազմաթիւ հնգիկ կիներ
ևս բանախօսութիւններ ըրին : Այս համաժողովին
մէջ յատկապէս շեշտուեցաւ Հնգիկներուն կաթողիկէ
Նկեղեցւոյ ունեցած յարուժք : Յաւ յայտնուեցաւ որ
չկան քրիստոնէական սորվեցնող անձեր՝ քարոզիչներու
և կրօնաւորներու պակասը լեցնելու համար : Մեծ
անջրպետները թոյլ չեն տար որ քարոզիչը ամենուն
այցելէ . և եթէ քարոզիչը հարեւաւոր մղաններ կը
կարէ կ'անցնի հոս հոն ցրուած հնգիկներու հոգեւոր
օգնութիւն հասցնելու համար Հնգիկներն այ իրենց
կողմէ գիւցապնական բարեպաշտութեան օրինակ կու
տան խոստովանելու, հազորդուելու կամ իրենց զա-
ւակները մկրտել տալու համար երկայն ճամբորդու-
թիւններ ընելով :

Պալքանեան խաւովութեանց միջոցին Ս. Ա-
թոռին բռնած ընթացքին մասին հետեւեալը կը գրէ
Պերիգօ Թերթը :

Այժմ կը տեսնուի ինչ որ է իրօք՝ Խաչին
մահիկին գէմ տարած կարծեցեալ յաղթանակը : Ձեռ-
նարկուածը պատերազմ մըն էր աշխարհակալութեան,
ո՛չ աւելի ո՛չ պակաս : Եւ այն դաշնակիցները որ ի-
րարու հետ միացեր էին Թուրքը Եւրոպայէն վատրե-
լու համար, իրենց փառաւար յաղթանակները անու-
րակիլի վատանուելութեան մը դարձուցին :

Այժմ կը տեսնուի թէ Վատիկան իրաւունք
ունէր ամենավերապահ գիրք մը բռնելու, և անձ-
նաւորը ըլլալու ծայրայեղ և անտեղի զգայնակա-
նութեան մը :

Վատիկան անգամ մը եւս ցոյց տուաւ ամե-
նարարձր քովեալի արժանի խոհեմութեան հաւատովք
մը : Բնաւ վտանգի մէջ չդրուաւ ապագան և վիճակը
այն կաթողիկէներուն, որ ծառային Թրքահայաստանի, և
որոնց գէմ Բ. Դուռը կրնար գաւառի եթէ Ս. Աթո-
ւը համակրութիւն ցոյց տուած ըլլար Պալքանեան
դաշնակիցներուն հանդէպ :

Եւ Վատիկան նոյն խոհեմութեան հաւատովքը
տուաւ, արդար եւ իրաւացի անվտանգութիւն մը
յայտնելով նկատմամբ այն ընթացքին, որ պալքանե-
ան պետութիւնները կրնային բռնել կաթողիկէնե-
րու հանդէպ : Արդէն հանրածանօթ է թէ մինչեւ
ս'եր կրնայ հասնիլ օրթոտոքական հալածանք . . .

Ս. Գահը կաթողիկէից կրօնական շահերով
միայն զբաղած՝ յաճախ շատ աւելի հեռուն կը տես-
նէ քան ուրիշները, որոնք իրերը կը կշռեն միայն ներ-
կայ ժամանակին դատանիներով : Ուստի կու գայ այն
օրը, ուր հարկ կ'ըլլայ խոստովանիլ թէ Ս. Գահը
խարուած չէ :

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Պոլսոյ մէջ գումարելի թուրքեւպուրիտ հաշ-
տութեան ժողովին Պուլկար, պատուիրակները Պոլիս
եկան Սեպտեմբեր 3ին մասնաւոր կառավարմամբ: Պո-
լիս ժամանող Պուլկար պատուիրակներն են, զօրավար
Սալօֆ, Պելկրասի նախորդ դեսպան Մ. Թօշէֆ, Էլ-
մոսկան խորհրդական Մ. Քօսէֆ, զնգապետ Բարա-
տօֆ և հրամանատար Նիքօօֆ: Սերքէճի կայարանը՝
ընդունելութեան համար կը սպասէին, ուստի կանոն-
ութեան ընդհանուր անօրէն Ալիս պէյ, քաղաքական
գործերու անօրէն Սալիհ պէյ և մեծ եպարքոսութեան
թարգման Էստո Փուատ պէյ: Հըշէջ գունդէն զին-
ուորական ջոկատ մը մասնաւոր պատիւներ ընծայեց
Պուլկար պատուիրակներուն:

Սերքէճի կը գտնուէին նաև Պոլիս գտնուող Պուլ-
կար միւս պատուիրակները Մ. Նաշէմիշ, Մ. Տօպրէֆ
և Պոլսոյ Պուլկար դեսպանատան Ա. Թարգման Մ.
Բօրօֆ: Մասնաւոր կառավարմամբ, որ վարչաշարժէ մը
և մինակ վաւերէ մը կը բաղկանար, Սերքէճի կայա-
րանը համեմուն պէս, վաւերին մէջ գտնուող և պուլ-
կար պատուիրակներուն ընկերացող Օսմանցի սպաները
վար ցատկեցին: Զօրավար Սալօֆ, որ պարզ հազուած
էր վաւերէն վար իջաւ աշխոյժ քայլերով: Զօր. Սալօ-
ֆի երեւոյթը — պղտիկ, նիհար, ճիւղկած մտերմով,
աչքերը յօնքերուն տակ ծածկուած — բնու չի հա-
մապատասխաներ լուսանկարներուն մէջ տեսնուած
պատկերին, և կամ աւելի ճիւղք եր երեւոյթը չի հա-
մապատասխաներ վերջին պատերազմներուն մէջ կա-
տարած իր դերին:

Արտաքին գործերու անօրէն Սալիհ պէյ, զօրա-
վար Սալօֆին մօտեցաւ և Վարչապետին բարեւները
հաղորդելով յայտնեց թէ, Պոլսոյ մօտին պատճա-
ռով, պուլկար պատուիրակութիւնը վաղը առաւու-
ր ժամը 10ին պիտի ընդունուի Ենի զիւղի իր բնակա-

րանին մէջ և Թօֆհանէ շոգիմուկոյի մը պիտի սպասէ
իրենց արամադրութեան տակ: Զօրավար Սալօֆ
չորհախալութիւն յայտնեց և շատով իր հպարտ
կիցները և ի. Դրան ներկայացուցիչները բարեւելէ
ետք արագ քայլերով անցաւ իրեն զինուորական պա-
տիւ ընող զօրքին առջեւէն: Զրուս շարժու մի մի զա-
նոնք բարեւեց և օթածօպիլ նստաւ, թերեւս հետա-
քրքիրներու աչքերէն խուսափելու համար: Պուլկար
պատուիրակութեան միւս անդամներն ալ ուրիշ կառ-
քերով Բերա՝ Բրօքէր պանդոկը ուղղուեցան:

•• Զօրավար Սալօֆի թիկնապահ անուանուած
է հարեւրապետ Խամպիլ Հազդը պէյ:

•• Կը հաւաստուի թէ Մեծ Տէրութիւնները թէ՛
Պուլկարիոյ և թէ՛ Թուրքիոյ յանձնարարած են հաշ-
տարար ոգի ցոյց տալ և ներկայ կացութեան վերջ
տալու համար հաշտութիւն կնքել:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Լաճէի խաղաղութեան Պալատան բացման հան-
դէպը կատարուեցաւ: Մ. Բարնէկի ճառ մը խօսե-
ցաւ, կոչ մը ընելով Վիլհէլմ կայսեր, որպէս զի
խաղաղութեան լոյսը արեւութեան թափուի: Խաղաղու-
թեան կազմակերպութիւն մը առաջ բերէ: Կայսեր
ձեռքերը մարդկային արիւնով աբառուորուած չեն,
հազուադէպ պարագայ մը, որուն Գերմանիա կը
պարտի իր հիանալի յառաջդիմութիւնները դատաւ-
րութեան, ճարտարարուեստի ու վաճառականու-
թեան մէջ: Վիլհէլմ կայսր ձեռքը բռնած է խա-
ղաղութեան ջահը, որով քաղաքակրթեայ բոլոր տե-
րութիւնները պէտք է հրաւիրէ խաղաղութեան կազ-
մակերպութիւն մը հիմնելու: Կայսեր խաղաղութեան
բռնանէ հինգ տարիները որ արդէն փայլուն արժա-
նիք մը կը կազմեն, համաշխարհային յաղթանակ մը
պիտի կազմեն պատերազմին վրայ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	561
Յիսուս Քրիստոս	564
Եր. Տէր Կովիսաւ Նահասակին պատմական երկու գրութիւնները	566
Լուի Վէյլեօ	568
Եօթնեակ Քրիստոսէի	570
Եսքեր	571
Էսկի վէ Էնի վասիլէրէր	573
Տեղեկագրական	575

ԱՐՏՅԱՆՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՐԱՄԱԳՐԱՆՏ

ԳԼՈՐԳ Ծ. ՎԱՐԻ. ԹԵՐԶԻՄԱՆԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Շաքարաբերքի, Բերա, Պալատ փողոցի 5, Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին
հրատարակուեցաւ ընտիր թուղթի վրայ, մաքուր տպագրու-
թեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գե-
ղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէ-
նուն Երանելի նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և,
անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ
անոր բարեխօսութեան անզուգական արդիւնքները:

Գիւն 5 դանկեան, էջ 144 աւուր քղթակագլ

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանա-
յական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առ-
ջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գը-
նողներու, գոհացուցիչ գեղջ:

ԿԸ ԾԱՆՈՒԻ ԵՍՏԱՐԱԿԱՆ ՍԿԳՐՈՆԷ ՔՐԻՍՏՈՆՆԵԱԿԱՆ ՎԱՐ-
ՊԱՅԵՄՈՒԹԵԱՆ» Հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ
կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ա-
մուր թղթակազմը 2 դհկն.:

ԲԱՏՈՒԳՈՒԳԻԱՆԻ ԳԱՅՄԱՆՆԵՐ.— Գաւազանի սահման՝ 40 դիւ արծ. վեցանետայ՝ 20,—
մէկ թիւ՝ 1 դիւ.— Առաւանական՝ ար. ճր. 10. վեցան. 5.— Կարմուխ կանխիկ են;

ՀԱՅՏԻ.— Կարողիկե Արձազան, Բերա, 5 Պայրամ փորոց, 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Bairam 5

Constantinople

ԾԱՌՈՒԹԻՒՆԸ.— 1.— Առաւանակ կը հասարակ ծառայ օրեր: 2.— Խմորագրութիւն պարտա-
ւորեալ չէ ամպաստա կամ նշանութեան հրահրակի իրեն յիշուած եւ է յոգուած: 3.— Կեղծանունով դիւան
յոգուածներու նկարներ կը պարտա իր իսկական անունը ծանուցանել Խմորագրութիւն: 4.— Ներագիրներ եւ չեն
դաւանիր: 5.— Ծոցուածներու ձեռագիրներ պէտք է գրուած լլայ արդիւն մէկ կողմը միայն: 6.— Ծանուց-
մանց համար մանուար օրախմորագրութիւն կը հասարակ: Էի փոփոխութեան համար պէտք է անհրա-
ժեշտ երկու զանեկանի ծանուցարար ի միտքին դրել:

ՏԱՐԱՆԻ Կարողիկե Արձազանի Բերա, 5 Պայրամ փորոց, 5, Կ. Պոլիս: Եւ արմա բաւ ամենայն նախ եւ ի վիճակի է
ար եւ իցէ սպարական զարձաց համար: Կը սպարակն արմա ծառայ ծառայ արմա, զիւրեր, ճեղքներ, հրահրագիրներ,
բարդեղ, բարդ-արեւներ, մանագրներ, եւն., եւն.: Դիւներ արմա-ցիկ կեղծով աման են: Դեղեցկագիտական շնա-
բանիկ եւ սպարական մաքրութեան զոգմանէ յանապաղելով անհրաւոր զոն պիտի մնան: